ՆՊԱՍՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՄՀ 990-2022/001

ք. Երևան **«10» հունվարի 2022թ.**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սիրվարդ Գևորգյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս ռեկտոր Սերգեյ Առաքելյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) «Մասնագիտական վերապատրաստում անցնող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրի իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի առարկան է՝

Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով՝ «Մասնագիտական վերապատրաստում անցնող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների տրամադրումը՝ 44446.0 հազար դրամ (քառասունչորս միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար) Կազմակերպությանը՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից հաստատված ծրագրերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի կողմից որակավորման ստուգման արդյունքներով դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում իրականացնելու նպատակով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Պահանջելու Կազմակերպությունից ներկայացնել ամսական կտրվածքով հաշվետվություն՝ իր կողմից իրականացված գործունեության վերաբերյալ,

2.1.2. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ստուգել կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվությունները, գումարների նպատակային օգտագործումը և թերություններ հայտնաբերելիս այդ մասին տեղյակ պահել կազմակերպությանը:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1.պետական մարմնից պահանջել փոխանցելու Հայաստանի Հանրապետության Արդարադատության ակադեմիային փոխանցման ենթակա գումարները:

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով Կազմակերպության բանկային հաշվին փոխանցել նախատեսված գումարները:

2.3.2. անհրաժեշտության դեպքում աջակցել Կազմակերպությանը.

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1.պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով կամ սույն պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով.

2.4.2. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.3. հաշվետվությունները Պետական մարմին ներկայացնել յուրաքանչյուր ամսվա վերաբերյալ մինչև հաջորդ ամսվա 10-ը ներառյալ, իսկ եթե այդ օրը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ աշխատանքային օր է, ապա այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը ներառյալ, իսկ ծրագրի ավարտից հետո ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

3. Նպաստի տրամադրման կարգը և ժամկետները

3.1. Նպաստը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով «Մասնագիտական վերապատրաստում անցնող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրով նախատեսված միջոցներից: Գումարի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով: Գումարները հատկացվում են Կազմակերպության բանկային հաշվին փոխանցելու միջոցով և այն կարող է փոխվել յուրաքանչյուր տարվա համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված միջոցների չափից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լրացուցիչ հատկացման միջոցների չափով:

3.2. Յուրաքանչյուր ամիս գումարը Կազմակերպության հաշվին է փոխանցվում նախորդ ամսվա փոխանցված գումարի վերաբերյալ Պետական մարմին հաշվետվություն ներկայացնելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրի 1-ին կետում նշված նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական միջոցների դադարեցումը:

4.2. Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է սույն թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

6.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Նպաստ տրամադրող	**Նպաստ ստացող**
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն 900011474518	«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ք. Երևան, Փիրումյանների 9 Հ/Հ 16043032235600 ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ ՀՎՀՀ 00129631
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ